# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 12

«05» մարտի 2018 թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի գ) կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի <<Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին>> N633-Ն որոշման 4-րդ կետի ե) և 6-րդ կետի է) ենթակետերի.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության <<Շիրակի մարզի Սարապատ համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը>>՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Համայնքի հիմնական ցուցանիշները քաղաքացիական պաշտպանության վիճակի համաձայն N2 հավելվածի.

3) Համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Համայնքի ինժեներական ապահովման տեխնիկայի և տրանսպորտային միջոցների հաշվարկը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 7 հավելվածի:

2. Համայնքի աշխատակազմի քարտուղար՝ Հ. Ավետիսյանին

Համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«05» մարտի 2018 թվական
գյուղ Թորոսգյուղ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Սարապատ համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի

# I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## 1. Պլանի սահմանումը եւ պլանի նպատակը

Քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում մարզի պետական տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների խնդիրները, գործառույթներն ու դրանց իրականացման կարգը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ է՝ բնակչության եւ նյութական արժեքները պաշտպանելու նպատակով:

Քաղաքացիական պաշտպանության պլանի կազմումը հանդիսանում է քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառումներից ամենակարեւորը եւ նպատակն է՝ հաշվարկել համայնքում առկա եւ անհրաժեշտ քաղաքացիական պաշտպանության ուժերը եւ միջոցները, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ:

## 2. Պլանում օգտագործված հիմնական հասկացությունները

**Քաղաքացիական պաշտպանություն՝** միջոցառումների համակարգ՝ ուղղված բնակչության եւ նյութական արժեքների պաշտպանությանը կամ պաշտպանության նախապատրաստմանը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում.

**հատուկ, կարեւորագույն նշանակության օբյեկտներ՝** պետական եւ ռազմավարական նշանակության, բարձր վտանգավորություն ունեցող եւ բնակչության կենսագործունեությունը ապահովող օբյեկտներ.

**քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝** համայնքներում, կազմակերպություններում ստեղծվող կազմավորումներ, որոնք հանդերձավորված են փրկարարական եւ անհետաձգելի վթարա-վերականգնողական աշխատանքների համար նախատեսված տեխնիկայով, հանդերձանքով, գույքով եւ նախատեսված են իրականացնելու քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ եւ չեն մտնում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի եւ այլ զորքերի կազմի մեջ.

**անհետաձգելի վթարա-վերականգնողական աշխատանքներ՝** առաջնահերթ աշխատանքներ՝ ուղղված մարդկանց կյանքին եւ առողջությանը սպառնացող այնպիսի գործոնների ազդեցության վտանգի վերացմանը, որոնք խոչընդոտում են մարդկանց որոնելուն եւ փրկելուն, ինչպես նաեւ շենքերի, շինությունների ամրացմանը կամ փլմանը, հեղուկ վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի եւ ջրի աղբյուրների վթարային անջատմանը եւ տարածքի սանիտարական մաքրմանը.

## 3.Պլանում ներգրավվող մարմինները և նրանց գործառույթները

Պլանում ներգրավվում են՝

- համայնքի տարահանման հանձնաժողով.
- համայնքապետարանի աշխատակազմ.
- համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ
- համայնքի քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

Պլանում ներգրավված մարմինների գործառույթները

Համայնքի ղեկավարը հանդիսանում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը եւ նրա գործառույթներն են՝

ա) կազմակերպում և ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը համայնքի տարածքում.

բ) բնակչությանը ներգրավում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը.

Համայնքի տարահանման հանձնաժողովի կողմից իրականացվող գործառույթներն են՝

ա) տարահանված բնակչության ընդունման հավաքակետերի եւ տեղաբաշխման վայրերի ծավալման նախապատրաստման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը.

բ) տարահանված բնակչության ընդունման եւ տեղաբաշխման միջոցառումների կազմակերպումը եւ իրականացումը.

գ) տարահանված բնակչությանը տեղաբաշխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցների հատկացման աշխատանքների կազմակերպումը.

**համայնքային ՔՊ ծառայությունների գործառույթներն են՝**

Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերը՝ քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին ներկայացնում են առաջարկություններ քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, կառուցվածքի, քանակի, համալրման և հագեցման վերաբերյալ: Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ընդհանուր գործառույթներն են՝

ա) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի համապատասխան պատրաստության աստիճանների բերման ժամանակ.

բ) քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և պահպանումը մշտական պատրաստականության վիճակում.

գ) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումն ու քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

Ըստ նշանակության՝ համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների խնդիրներն են.

ա) կապի և ազդարարման ծառայության գծով՝ կառավարման մարմինների և բնակչության ազդարարումը, ռազմական դրության ժամանակ կառավարման մարմինների՝ կապով ապահովումը.

բ) ինժեներական ծառայության գծով՝

պաշտպանական կառույցների շինարարության պլանավորումը, կազմակերպումը և պատսպարվող բնակչության ընդունման համար այդ կառույցները պատրաստ վիճակում պահելը,

պաշտպանական կառույցների և բնակչության պատսպարման համար նախատեսված այլ տարածքների նախապատրաստման, վերանորոգման աշխատանքների պլանավորումը և դրանց շահագործման նկատմամբ հսկողության սահմանումը,

պաշտպանական կառույցներին բնակչության ամրագրումը,

փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ինժեներական ապահովումը.

գ) բժշկական ծառայության գծով՝ հակառակորդի հարձակման վտանգի և հարձակման ժամանակ բնակչության բժշկական ապահովումն ու տուժած բնակչությանը բժշկական օգնություն ցույց տալը.

դ) տրանսպորտային ծառայության գծով՝ բնակչության տարահանման, հիվանդների և տուժածների փոխադրման ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների համար նրանց փոխադրումների՝ տրանսպորտային միջոցներով ապահովումը.

ե) առևտրի և սննդի ծառայության գծով՝

տուժած բնակչության, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ընդգրկված կազմավորումների անձնակազմի՝ սննդամթերքով ու առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով և միջոցներով ապահովումը,

նյութական արժեքների պաշարների պահպանումը.

զ) էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության գծով՝

էներգամատակարարման համակարգի գործունեության կայունության միջոցառումների պլանավորումն ու իրականացումը,

էլեկտրամատակարարման ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը,

լուսաքողարկման միջոցառումների պլանավորումը, կազմակերպումը և կատարման նկատմամբ հսկողության սահմանումը.

է) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության գծով՝

գյուղատնտեսական կենդանիների և բույսերի, անասնաբուծական ու բուսաբուծական արտադրանքի, գյուղատնտեսական նպատակների համար օգտագործվող ջրային աղբյուրների և ոռոգման նպատակով օգտագործվող ջրամատակարարման ցանցերի պաշտպանության միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը,

վտանգավոր տարածքներից գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրանքի պաշարների դուրսբերման աշխատանքների կազմակերպումը.

ը) հասարակական կարգի պահպանման ծառայության գծով՝

ռազմական դրության ժամանակ քաղաքներում և այլ բնակավայրերում, կազմակերպություններում, տարահանման հավաքակայաններում ու տրանսպորտային մայրուղիներում հասարակական կարգի պահպանման ապահովումը, գույքի պահպանումը, ինչպես նաև տարահանված բնակավայրերում և օբյեկտներում մնացած գույքի պահպանության իրականացումը,

ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը.

թ) նյութատեխնիկական մատակարարման ծառայության գծով՝ փրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող կազմավորումների՝ նյութատեխնիկական անհաժեշտ միջոցներով ապահովումը.

ժ) կոմունալ-տեխնիկական ծառայության գծով՝ ջրամատակարարման և կոյուղու ցանցերի կայունության բարձրացման միջոցառումների պլանավորումն ու իրականացումը, ինչպես նաև ջրամատակարարման և կոյուղու ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը.

ժա) բնակչության հատուկ սպասարկումների ծառայության գծով՝ բնակչության շրջանում անվերադարձ կորուստների հաշվառման, դիակների հուղարկավորման աշխատանքների կատարումը:

**ՔՊ Կազմավորումների կողմից իրականացվող գործառույթներն են՝**

ա) կազմավորումները գործունեությունն իրականացնում են միանձնյա ղեկավարման սկզբունքով՝ համագործակցելով քաղաքացիական պաշտպանության միջոցառումներում ընդգրկված կառավարման մարմինների, կազմակերպությունների եւ այլ ուժերի հետ.

բ) կազմավորումները պատրաստականության են բերվում տվյալ կազմակերպության ղեկավարի կողմից՝ քաղաքացիական պաշտպանության համակարգը «Լիակատար» պատրաստության բերելու դեպքում:

Կազմավորումների անձնակազմերի ազդարարումն ու հավաքն իրականացվում են համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետերի կողմից հաստատված ազդարարման եւ հավաքի սխեմաների համաձայն.

բ) կազմավորումները գործում են քաղաքացիական պաշտպանության ուժերի խմբավորումների կազմում՝ առաջին եւ երկրորդ էշելոնում կամ պահեստային ուժերում: Կազմավորումները կարող են գործել նաեւ առանձին՝ պահպանելով կազմակերպական կառուցվածքը.

գ) փրկարարական աշխատանքների ընթացքում կազմավորումների հրամանատարները համագործակցում են քաղաքացիական պաշտպանության զորքերի եւ այդ աշխատանքներում ընդգրկված այլ ուժերի եւ ստորաբաժանումների հետ:

## 4. Պլանի իրավական հիմքը

Համայնքի պլանը մշակվել է՝ ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման եւ գործունեության կարգը սահմանելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 30.01.2003թ-ի թիվ 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 22.01.2015թ. թիվ 46-Ն, «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման եւ գործունեության կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ-ի նոյեմբերի 13-ի թիվ 1532-Ն, ՀՀ կառավարության 2011թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն, «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000թ-ի հոկտեմբերի 25-ի թիվ 679 որոշումներով:

## II ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

### 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքը զբաղեցնում է ՀՀ Շիրակի մարզի տարածքի հյուսի-արևելյան մասը, իր մեջ ընդգրկելով թվով 15 բնակավայրերը՝ Թորոսգյուղ, Արփենի, Բաշգյուղ, Գոգհովիտ, Լեռնագյուղ, Կաքավասար, Հարթաշեն, Հողմիկ, Ձորաշեն, Մուսայելյան, Սալուտ, Սարապատ, Վարդաղբյուր, Յողամարգ, ՓոքրՍարիյար:

Համայնքի տարածքը կազմում է 27465,34 կմ², համայնքի բնակչության թիվը կազմում է 3681 մարդ: Համայնքի բնակչության թվաքանակը ըստ տարիքի եւ սեռի՝

- մինչեւ 1 տարեկան – 29
- 1-9 տարեկան – 372
- 9-17 տարեկան – 336
- 17 եւ բարձր – 2944
- աշխատունակ տարիքի – 2654
- 17-ից բարձր կին – 1445
- 17-ից բարձր տղամարդ - 1499

Համայնքում գերակշռում են տափաստանային լանդշաֆտների լեռնային տարբերակները:

Համայնքում գերակշռում են լեռնային տարբերակները: Համայնքում կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ բարձրության և արտահայտվում են բարեխառն ամառներով ու ցուրտ ձմեռներով: Համայնքի կլիման, թեեւ ընդհանուր առմամբ բարեխառն է, բայց աչքի է ընկնում ցամաքայնությամբ եւ ըստ բաձրության դառնում է ավելի խիստ: Համայնքում տարեկան տեղումների քանակը կազմում է 573 մմ:

Համայնքի տարածքով անցնում է «M1» համապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհը:

Համայնքում առկա է թվով 41 կամուրջ: Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է 22 ջրաղբյուրներից, ջրամատակարարաման խողովակների ընդհանուր երկարությունը կազմում է 69.9 կմ:

Համայնքի էլեկտրամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 110870 մ.: Համայնքի գյուղատնտեսական կենդանիների եւ թռչունների գլխաքանակի վերաբերյալ տեղեկությունները հետեւյալն են՝

- խոշոր եղջերավոր – (7585) գլուխ
- մանր եղջերավոր – (8834) գլուխ
- բանող անասուններ – (27) գլուխ
- խոզեր – (404) գլուխ
- թռչուններ - (7220) թեւ

## 2.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԶԵՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ համայնքում հնարավոր է հանդիսանան՝

1) համայնքի գյուղապետարանի վարչական շենքը,
2) ջրամատակարարման աղբյուրները
3) ֆիքսված և բջջային հեռախոսակապի հանգույցներն ու ապահովող սարքավորումները.
4) համայնքի տարածքում գտնվող հեռուստաաշտարակը,
5) ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհները ու ճանապարհային կառույցները, օդային հաղորդակցությունը.
6) բնակելի (շենքերը և տները) ֆոնդի տարածքները:

## 2.3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հակառակորդի գործողությունների արդյունքում համայնքի տարածքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

Զենքերի կիրառման դեպքում շենքերը եւ շինությունները կարող են կրել տարբեր աստիճանների վնասվածքներ, որոնք բաժանվում են՝ լրիվ, ուժեղ, միջին ու թույլ.

▪ լրիվ վնասվծության դեպքում փլատակներում հիմնականում շենքերի, շինությունների կրող կոնստրուկցիաների, սարքավորումների, կահույքի մասեր են: Կարող են քանդվել նաեւ պաշտպանական կառույցների ծածկերը, մուտքի պաշտպանիչ դռները, շարքից կարող են դուրս գալ ներսի բոլոր սարքավորումները, հնարավոր է, որ բոլոր պատսպարվածները զոհվեն: Լրիվ վնասվծության դեպքում շարքից կարող են դուրս գալ նաեւ գազատար եւ ջրատար խողովակները: Կամուրջների լրիվ վնասվածության դեպքում, կամուրջների թռիչքները

դեֆորմացվում են եւ երթեւեկելությունը կամուրջներով կարող է վերականգնվել հենարանների թռիչքների ուժեղացման աշխատանքներից հետո:

▪ միջին եւ թույլ վնասվածության դեպքում հիմնականում վնասվում են շենքերի եւ շինությունների կտուրները, իսկ հիմնական կոնստրուկցիաները պահպանվում են: :

1) բնակչության շրջանում տուժածները կկազմեն.

▪ անվերադարձ (1%) - 6 մարդ ,

▪ սանիտարական (3%)- 18 մարդ

2. Կատարվելիք փրկարարական եւ փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ծավալները եւ իրականացման կարգը՝

➢ Փրկարարական աշխատանքներին դասվում են.

ա) խոցված բնակչության որոնումը, նրանց դուրս բերումը շենքերի փլատակների տակից, այրվող շենքերից, վնասված պաշտպանական կառույցներից, նրանց առաջին բուժ.օգնության ցուցաբերումը, տեղափոխումը բժշկական կազմավորումների մոտ, առաջին բժշկական օգնության ցուցաբերումից հետո, նրանց տարահանումը բժշկական հիմնարկներ.

բ) խոցված օջախների հետախուզումը, հրդեհների մեկուսացումը եւ հրդեհաշիջումը.

գ) փլված, վնասված պաշտպանական կառույցների հայտնաբերումը եւ անհրաժեշտության դեպքում օդի մատակարարումը վնասված թաքստոցների ներսը.

դ) բնակչության դուրս բերումը ռադիոակտիվ, քիմիական վարակվածության, հնարավոր ջրհեղեղման գոտուց դեպի անվտանգ տարածքներ.

ե) տարածքների, տեխնիկայի եւ հանդերձանքի ապաակտիվացման, ախտահանման եւ մարդկանց սանիտարական մշակման միջոցառումների իրկանացումը.

➢ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներն անցկացվում են փրկարարական աշխտանքների առավել անվտանգ իրականացման նպատակով եւ նրանց շարքին դասվում են.

ա) վթարների մեկուսացումը.

բ) վթարված կամուրջների վերանորոգումը, վերականգնումը.

գ) շենք, շինությունների կախված վտանգավոր կոնստրուկցիաների ամրացումը կամ հեռացումը, փրկարարական ուժերի անվտանգ մուտքը խոցված տարածքներ ապահովելու նպատակով:

3. Համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերը, դրանք համայնքում, ստեղծված քաղաքացիական պաշտպանության կազմավորումներն են, մասնավորապես.

ա) փրկարարական՝ խոցման օջախներում փրկարարական եւ վթարավերականգնողական աշխատանքներ կատարելու համար.

բ) հետախուզական՝ ջրածածկման գոտիներում, զանգվածային հրդեհների շրջանում, բնակավայրերում եւ տեղաբաշխման երթուղիներում մասնագիտացված հետախուզություն իրականացնելու համար.

Կազմավորումների ապահովումը հատուկ տեխնիկայով եւ տրանսպորտային միջոցներով. կազմակերպվում է համայնքային ՔՊ ծառայության կողմից և իրականացվում է՝

ա) պետական մարմիններին պատկանող տեխնիկական միջոցներով.

բ) համայնքին կազմակերպությանը եւ ֆիզիկական անձին պատկանող տեխնիկական միջոցներով՝ պայմանագրային հիմունքներով:

Կազմավորումների պատրաստականությունն ապահովում են համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը, նրա շտաբը, ինչպես նաեւ կազմավորումների հրամանատարները: Կազմավորումների երթը քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման վայրեր կազմակերպում եւ անձամբ ղեկավարում են համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետերը:

Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներից առաջին հերթին անհատական պաշտպանական միջոցներով ապահովվում են փրկարար ուժերի անձնակազմը՝ զտող հակագազերով, շնչադիմակներով, մաշկի պաշտպանության միջոցներով, անհատական պաշտպանության միջոցների բացակայության դեպքում, որպես մաշկի պաշտպանության հասարակ միջոցներ, կարող են հարմարեցվել սովորական հագուստը, մարզահագուստը եւ կոշիկները, որոնք ենթարկվում են հերմետիկացման եւ նախօրոք հագեցվում հատուկ բաղադրությամբ՝ օճառայուղային էմուլսիաներով:

4. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման եւ անցկացման վրա ազդող առանձնահատկությունները՝

ա)Համայնքի ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների ինժեներական կառույցների վնասման պարագայում անհնար կդառնա տարահանումը և փրկարարական ուժերի առաջանցումը դեպի վնասված գոտիներ.

բ) դիվերսիոն գործողությունների հետևանքով կարող է աղտոտվել համայնքի ջրամատակարարման օրվա կարգավորման ջրամբարները, բաց աղբյուրները, ինչպես նաև կապտաժները.

գ) կընդհատվի ֆիքսված և բջջային հեռախոսակապն ամբողջովին.

դ)հեռուստաաշտարակների վնասման դեպքում կընդհատվի կենտրոնական հեռարձակման ալիքների հաղորդումները, տեղական հեռուստաալիքների վնասման դեպքում տեղական հեռարձակումը.

ե) կընդհատվի փոստային հաղորդակցությունը.

զ)բժշկական հիմնարկների շարքից դուրս գալու դեպքում անհնար կլինի բժշկական սպասարկումը:

## III ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

### 3.1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Ամենօրյա» պատրաստականության աշխատակարգի ժամանակ իրականացվող միջոցառումները.

- Հայաստանի Հանրապետության ՀՀ Շիրակի մարզի պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները <<Մշտական>> պատրաստականության աշխատակարգում զբաղվելով իրենց ամենօրյա աշխատանքային գործունեությամբ, պետք է պատրաստ լինեն քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը:

Համայնքի քաղաքացիական պաշտպանության վիճակի վերաբերյալ հիմնական ցուցանիշները ներկայացված են հավելված N 2- ում:

Մարզի համայնքները, կազմակերպությունները, Շիրակի մարզային փրկարարական վարչությունը քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը պատրաստ լինելու համար, անհրաժեշտ է որ, քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ իրենց իրավասության սահմաններում իրականացնեն քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառումները.

ա) մարզի համայնքներում, կազմակերպություններում, քաղաքացիական պաշտպանության ծառայություններում ստեղծեն քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝

փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման նպատակով.

բ) շինարարական կազմակերպությունները ապահովեն շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների եւ մայր ուղիների շինարարության անվտանգությունն ու հուսալիությունը.

գ) հիմնել կառավարման, կապի եւ ազդարարման համակարգեր եւ ապահովել դրանց բնականոն գործունեությունը.

դ) իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների պատրաստումը եւ բնակչության ուսուցումը.

ե) իրականացնել պաշտպանական կառույցների հաշվառումը եւ պահպանումը.

զ) կուտակել անհատական պաշտպանության միջոցների եւ քաղաքացիական պաշտպանության նպատակով այլ գույքի անհրաժեշտ պաշարներ.

է) մշակել համայնքի քաղաքացիական պաշտպանության քաղաքացիական պաշտպանության պլան:

2. <<Բարձր>> պատրաստականության աշխատակարգի ժամանակ իրականացվող միջոցառումները.

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերը <<Բարձր>> պատրաստականության աստիճանի փոխադրվելու ժամանակ, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները անցկացնում են <<Բարձր>> պատրաստականության աշխատակարգի միջոցառումներ՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի պատրաստությանը, ինչպես նաև հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանը:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության համակարգը փոխադրվում է <<Լրիվ>> պատրաստականության աշխատակարգի Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ռազմական դրություն հայտարարվելու դեպքում:
- Եթե մինչև Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարվելը քաղաքացիական պաշտպանության <<Բարձր>> պատրաստականության աշխատակարգի միջոցառումները չեն իրականացվել, կամ իրականացվել են ոչ բոլոր միջոցառումները, ապա դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում:
- Քաղաքացիական պաշտպանության համակարգի <<Լրիվ>> պատրաստականության աշխատանքային ռեժիմի դեպքում համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմը իրենց լիազորությունների սահմանում գործողության մեջ են դնում քաղաքացիական պաշտպանության պլանը, կազմակերպում և անցկացնում է այդ պլանով նախատեսված միջոցառումները բացի տարահանումից, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինների և տվյալ տարածքի զինվորական կայազորի կողմից՝ իրենց իրավասությունների սահմաններում:
- Քաղաքացիական պաշտպանության համակարգի ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու միջոցառումներն անցկացվում են քողարկված՝ ուսումնավարժությունների և վարժանքների անցկացման պատրվակով:
- Քաղաքացիական պաշտպանության համակարգի ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու վերաբերյալ ազդանշանների հաղորդումն իրականացվում է՝

ա) տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետի միջոցով:

▪ Համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստուգումը՝ պատրաստականության աշխատանքային ռեժիմների բերմամբ, իրականացվում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ, որտեղ նշվում են ստուգման ծավալները և ժամկետները, ստուգում իրականացնող լիազորված անձը:

▪ Հայաստանի Հանրապետության համայնքի քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության փոխադրման միջոցառումներն իրականացվում են մարզի տարածքային զինվորական կայազորի պետի հետ համաձայնեցված:

## 3.2 ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

▪ Հայաստանի Հանրապետության համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, տարահանման հանձնաժողովի, ռազմական դրության պայմաններում գործունեությունը շարունակող կազմակերպությունների, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և կազմավորումների ղեկավարների, զինվորական կայազորի պետի ազդարարման և նրանց հետ կապի ապահովման կարգը ներկայացված է համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կառավարման, կապի եւ ազդարարման սխեմայում՝ հավելված N 3:

▪ Համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կապը մարզի համայնքների, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, կարևորագույն նշանակության օբյեկտների, քաղաքացիական պաշտպանության պետերի հետ կազմակերպելու համար օգտագործվում է բջջային և ֆաքսիմիլային կապերը:

## 3.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

▪ Քաղաքացիական պաշտպանության հետախուզությունը իրականացվում է համայնքի ամբողջ տարածքում:

▪ Հետախուզության նպատակն է իրադրության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ձեռքբերում՝ որոշումներ ընդունելու համար՝ ուղղված բնակչության և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի պաշտպանությանը, ինչպես նաև փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացմանը:

▪ Հետախուզության առարկա են հանդիսանում՝

1) համայնքի վարչական տարածքները.

2) լրիվ և ուժեղ ավերածությունների ու աղետալի ջրածածկման գոտում հայտնված համայնքի տարածքները.

3) հրդեհների օջախները.

4) բնակչության տարահանման և քաղաքացիական պաշտպանության ուժերի առաջանցման երթուղիները.

5) գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների օջախները.

6) պաշտպանական կառույցները և մարդկանց այլ հավաքատեղիները, շրջակա միջավայրի օբյեկտները:

▪ Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում հետախուզության հիմնական խնդիրներն են՝

1) շրջակա միջավայրի վարակվածության նկատմամբ անընդհատ դիտարկում և լաբորատոր հսկողության իրականացում.

2) սանիտարահամաճարակային վիճակի ճշգրտում՝ քաղաքացիական պաշտպանության համահավաք ուժերի նախապես ընտրված տեղակայման և առաջիկա գործողությունների վայրերում, ինչպես նաև տարահանվող բնակչության տեղաբաշխման վայրերում.

3) քաղաքացիական պաշտպանության ուժերի դեպի խոցման օջախներ մուտքի, ինչպես նաև տարահանման երթուղիների վիճակի ճշգրտում.

▪ Հակառակորդի հարձակումից հետո հետախուզության հիմնական խնդիրներն են՝

1) կիրառված զենքերի տեսակների, հարվածի ենթարված տարածքների և օբյեկտների բացահայտում.

2) ռադիոակտիվ և թունավոր նյութերի, մանրէաբանական միջոցների և վարակված տարածքների սահմանների հայտնաբերում.

3) քաղաքացիական պաշտպանության ուժերի տեղակայման վայրերում և դեպի խոցման օջախներ մուտքի երթուղիներում իրադրության ճշգրտում.

4) հիդրոտեխնիկական կառույցների փլվածքների բնույթի և աղետալի ջրածածկման գոտիների որոշում.

5) ինժեներական կառույցների, կոմունալ-էներգետիկ ցանցի, կապի գծերի, երկաթգծերի, ավտոմայրուղիների վիճակի ճշգրտում.

6) փրկարարական աշխատանքներ իրականացվող օբյեկտներում և բնակչության տեղաբաշխման վայրերում ռադիացիոն, քիմիական և մանրէաբանական վարակվածության վիճակի որոշում.

7) վտանգավոր օբյեկտների փլվածքների բնույթի, պաշտպանական կառույցների տեղերի, մոտեցման ուղիների ճշգրտում, դրանցում առկա մարդկանց վիճակի և օգնության ցուցաբերման ձևերի որոշում.

8) փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ողջ ընթացքում իրադրության փոփոխության անընդհատ հսկողության իրականացում.

9) հրդեհների տարածքների հայտնաբերում և հրդեհների տարածման ուղղությունների որոշում:

▪ Հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն: Հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես:

## 3.4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

### 3.4.1 ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

▪ Անհատական պաշտպանության միջոցները նախատեսված են պաշտպանելու մարդու օրգանիզմը, մաշկը և հանդերձանքը ռադիոակտիվ, ուժեղ ներգործող թունավոր նյութերից և մանրէաբանական միջոցներից:

▪ Անհատական պաշտպանության միջոցները բաժանվում են 2 խմբի՝ շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ և մաշկի պաշտպանության միջոցներ:

▪ Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ են հանդիսանում զտող և մեկուսացնող հակագազերը, շնչադիմակները և հասարակ միջոցները՝ փոշի չթափանցող գործվածքային դիմակները և բամբակաթանզիֆային վիրակապերը:

▪ Անհատական պաշտպանության միջոցներով ապահովման կարգի համաձայն, բնակչությունն անհատական պաշտպանության միջոցներով ապահովվում է հետևյալ հերթականությամբ.

ա) առաջին հերթին՝

սահմանամերձ մինչև 10 կմ շառավիղով գոտու համայնքի բնակչությունը, փրկարար ուժերի անձնակազմը.

բ) երկրորդ հերթին՝

մնացած բնակչությունը:

▪ Համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը ներկայացված է հավելված N 4-ում:

▪ Անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկի արդյունքում, համայնքի ՔՊ պետը հայտ է ներկայացվում Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին եւ նրա կողմից ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենին հայտ է ներկայացվում մարզի ՔՊ կազմավորումների եւ բնակչության համար անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցների հատկացման համար, իսկ ՓԾ տնօրենի կարգադրությամբ դուրս են գրվում հայտագրեր, որոնցով ՇՄՓՎ պետը կազմակերպում է համապատասխան պահեստներից ԱՊՄ-ի ներկրումը ԱՊՄ բաշխման կետեր:

## 3.4.2. ՊԱՏՍՊԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

▪ Բնակչության պատսպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պատսպարումը ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվում է <<Օդային տագնապ>> ազդարարման ազդանշանով:

▪ Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ամրագրված են քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական և հիմնական միջոցառումների ցանկերում և ընդգրկում են՝

1) պաշտպանական կառույցների վաղօրոք շինարարություն.

2) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

3) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպում.

4) արագ կառուցվող ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի դեպքում:

Համայնքի բնակչության պատսպարումն իրականացվում է համայնքում առկա կազմակերպությունների եւ բնակելի ֆոնդի նկուղային հարկերում:

▪ Համայնքի բնակչության պատսպարման իրականացումը ապահովելու նպատակով, նախապես կատարվել է համայնքի բնակչությանը պաշտպանական կառույցներին (նկուղներին) ամրագրման հաշվարկներ:

▪ Պաշտպանական կառույցներով չապահովված բնակչությունը մասնակցում է պարզագույն թաքստոցների կառուցմանը, հետագայում դրանցում պատսպարվելու նպատակով:

▪ Պաշտպանական կառույցները պատրաստականության են բերվում, պատսպարվողների ընդունման համար ազդանշան տալու պահից սկսած 12 ժամվա ընթացքում:

▪ Համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը ներկայացված է հավելված N 5-ում:

## 3.4.3 ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

▪ Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու, ինչպես նաև այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

▪ Համայնքի բնակչության տարահանման միջոցառումները իրականացվում են ՀՀ Շիրակի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման պլանին համապատասխան:

▪ Զենքի տեսակների կիրառման դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի զինվորական կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

▪ Բնակչության տարահանումը, տարահանված բնակչության ընդունումը և տեղաբաշխումը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

▪ Տարահանման միջոցառումների կազմակերպման և իրականացման նպատակով համայնքում, համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ ստեղծվել է համայնքային տարահանման-ընդունման հանձնաժողով: Հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է համայնքի ղեկավարի տեղակալը:

▪ Ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում սահմանամերձ, ինչպես նաև մարտական գործողությունների վարման և զենքի տեսակների անմիջական կիրառման բնակավայրերից և տարածքներից կատարվում է մասնակի տարահանում:

▪ Տարահանված բնակչությանը ընդունելու համար ընդունող համայնքի դպրոցում նախատեսվում է տարահանված բնակչության ընդունման հավաքակայան:

▪ Համայնքի բնակչության տարահանման հաշվարկը ներկայացված է հավելված N 6-ում:

## 3.5. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

### 3.5.1. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

▪ Հակառակորդի հարվածից հետո իրավիճակի գնահատմանն զուգընթաց իրականացվում է խափանված կառավարման համակարգի վերականգնում և փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում:

▪ Խոցման օջախներում փրկարարական աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվում են աշխատանքային տեղամասեր, որտեղ փրկարարական աշխատանքների անընդհատությունը ապահովելու նպատակով համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ սահմանվում են աշխատանքային երկու և ավելի հերթափոխեր:

▪ Բնակելի հատվածներում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում փլված շինություններում տուժածների որոնմանը և բուժօգնության ցուցաբերմանը: Այս աշխատանքներին ներգավվում են ձեռքի գործիքներով և մեխանիզացիայով հագեցված ստորաբաժանումները:

▪ Փրկարարական աշխատանքներին ներգրավվում է համայնքի փրկարարական կազմավորումը, որոնք հագեցված են ձեռքի գործիքներով:

▪ Համայնքի ՔՊ կազմավորումները կարող են համալրվել համայնքի քաղաքացիներից՝ 16-65 տարիքի տղամարդկանցից եւ 16-55 տարեկան կանանցից, բացառությամբ այն կանանց որոնք ընտանիքի կազմում ունեն մինչեւ 16 տարեկան տարիքի երեխաներ:

▪ Ճանապարհների անցանելիությունն ապահովվում է համայնքի ուժերով, անհնարինության դեպքում՝ տվյալ տարածաշրջանը սպասարկող ճանապարհաշինարարական կազմակերպությունների օժանդակությամբ:

▪ Ճանապարհների երթևեկության վերականգնումից հետո իրականացնում են ճանապարհների մաքրում դեպի աշխատանքային տեղամասեր:

▪ Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը, ձևերը և կատարման կարգը կախված են փլվածքների բնույթից, վթարների տեսակից, երկրորդային վտանգ ներկայացնող գործոններից:

▪ Հիմնականում տուժած տարածք ուժերի մուտք գործելու հերթականությունը հետևյալն է՝

1) ճանապարհների անցողականության ապահովման խմբերը և հետախուզությունը.

2) հիմնական ստորաբաժանումներ (հրշեջ-փրկարարական ջոկատները, փրկարարական վաշտերը).

3) բժշկական ստորաբաժանումները.

4) փրկարարական կազմավորումները.

5) հասարակական կարգի պահպանման և վթարատեխնիկական կազմավորումները:

▪ Մանրէաբանական վարակվածության օջախներում հայտարարվում է <<կարանտին>>: Այս դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները կազմակերպվում է կարանտինի ռեժիմի պահանջներին խիստ համապատասխան:

▪ Վերը նշված դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին ներգրավվում են միայն անհատական պաշտպանության միջոցներով ապահովված ստորաբաժանումները (կազմավորումները):

▪ Աղետալի ջրածածկման գոտում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներն իրականացնում են լողամիջոցներով հագեցված, ինչպես նաև ինժեներական տեխնիկա ունեցող կազմավորումները:

▪ Գիշերային ժամերին ապահովվում է փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների աշխատանքային տեղամասերի և երթուղիների լուսավորումը: Զուգահեռ կազմակերպում է պարեկային ծառայություն:

▪ Նյութատեխնիկական, տեխնիկական սպասարկման, սննդի և խմելու ջրի մատակարարման կազմավորումները ծավալվում են աշխատանքային տեղամասերին մոտ և ուժերի ժամանակավոր տեղակայման վայրերում:

▪ Վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը կանխելու նպատակով իրականացվում է մահացածների հուղարկավորման, վարակված, փչացած սննդամթերքի և սատկած գյուղատնտեսական կենդանիների ոչնչացման միջոցառումներ:

## 3.5.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

▪ Ուժերի խմբավորումը համայնքում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների մի մասն է, նախատեսված կոնկրետ վայրում (շրջանում, ուղղությունում) փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու համար:

▪ Ուժերի խմբավորման կազմը, քանակը և հագեցվածությունը որոշվում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի հրամանով:

▪ Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու, անընդհատությունը ապահովելու, հանկարծակի առաջացած լրացուցիչ խնդիրների լուծման համար հայտ է ներկայացվում մարզի ՔՊ պետին անհրաժեշտ տեխնիկայով ապահովելու համար:

## 3.6.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### 3.6.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

▪ Համայնքում քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգը ապահովում է համայնքի հասարակական կարգի պահպանման խումբը:

▪ Հասարակական կարգի պահպանման ուժեղացմանն ուղղված կատարվում են հետևյալ միջոցառումները՝

1) հասարակական կարգի պահպանման միջոցառումներն իրականացվում են պահակակետերում, հսկիչ-անցագրային կետերում, երթուղիներում, մարդաշատ ու զանգվածային միջոցառումների անցկացման վայրերում.

2) ծառայության կազմակերպման համար մշակվում է միասնական տեղադիր, հաշվարկվում են ուժերն ու միջոցները, մշակվում ծառայությունների համագործակցության պլան.

3) հասարակական կարգի պահպանությունն կարող է ուժեղացվել մարզային ոստիկանության ուժերի և միջոցների հաշվին.

▪ Ռազմական դրության պայմաններում բնակչության տարահանման և տնտեսական փոխադրումների ընթացքում ճանապարհային երթևեկության կարգավորման կարգը հետևյալն է՝

1) ռազմական դրության պայմաններում ավտոճանապարհներին տրանսպորտային միջոցների և հետիոտների երթևեկության կարգը, ինչպես նաև երթևեկության մասնակիցների փոխադարձ պարտավորությունները կարգավորվում (որոշվում) են ճանապարհային երթևեկության կանոններով.

2) ավտոճանապարհներին (բացի ռազմական նշանակության) երթևեկության կազմակերպման և կարգավորման պատասխանատվությունը դրվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության վրա.

4) ռազմական նշանակության ավտոճանապարհներին երթևեկության կազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից անհրաժեշտության դեպքում ընդգրկելով նաև Շիրակի մարզային ոստիկանության ուժերն ու միջոցները.

5) ռազմական նշանակության ճանապարհներին, մինչև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ճանապարհապարեկային ծառայության ուժերի ծավալումը, երթևեկությունը կարգավորվում է մարզային ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայության և այլ ստորաբաժանումների ուժերով ու միջոցներով:

6) փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների, ինչպես նաև տարահանման ու տնտեսական փոխադրումների իրականացման ժամանակ, բնակավայրերում և դրանցից դուրս եկող ավտոճանապարհներով բոլոր տեսակի ավտոփոխադրումների (բացի զինվորականից) կազմակերպման և իրականացման պատասխանատվությունը դրվում է պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների վրա.

7) իրականացվող փոխադրումների պլանավորման և ապահովման ժամանակ սահմանվում է փոխադրումների հետևյալ հերթականությունը՝

ա. առաջին հերթին՝ բոլոր տեսակի զինվորական փոխադրումները.

բ. երկրորդ հերթին՝ մարդկանց տարահանում.

գ. երրորդ հերթին՝ բեռների փոխադրում.

8) ռազմական դրության պայմաններում ավտոճանապարհներին տրանսպորտային միջոցների երթևեկության հերթականությունն ապահովելու համար նախատեսվում են անցագրեր.

9) բնակչության տարահանման և տնտեսական փոխադրումների դեպքում ավտոճանապարհային երթևեկության կարգավորման կարգախմբերն իրենց ծառայությունը կատարում են հսկիչ-անցագրային երթևեկության կարգավորման կետերում.

10) հսկիչ-անցագրային կետերում ճանապարհային ոստիկանության ծառայողները իրենց ծառայությունը կազմակերպում են մարզի պարեկային ծառայության հետ համատեղ:

Նրանց հիմնական խնդիրներն են՝

ա. ճանապարհներին տրանսպորտային միջոցների հետիոտների անվտանգ երթևեկության ապահովումը.

բ. տրանսպորտային միջոցների երթևեկության սահմանված կարգի պահպանումը.

գ. հասարակական կարգի պահպանմանը մասնակցությունը.

դ. հանցագործության և այլ իրավախախտումների նախազգուշացումն ու կանխումը.

ե. պետական ունեցվածքի պահպանումը.

զ. իրավիճակից բխող այլ խնդիրների կատարումը.

11) երթևեկության կարգավորման կետերը լինում են շարժական և անշարժ: Շարժական կարգավորման կետերում (ճանապարհի առանձին հատվածներ) ճանապարհային ոստիկանության ծառայողները նշանակվում են ճանապարհային երթևեկության խնդիրները լուծելու, տարահանման դեպքում՝ ռեժիմային միջոցառումներն իրականացնելու, տարահանման

ու զորահավաքային վայրերում երթևեկության անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով.

12) անշարժ կարգավորման կետերը տեղադրվում են խաղաղ և ռազմական դրության ժամանակաշրջանում սպասարկվող ճանապարհների առանձին հատվածներում (կետերում).

13) հսկիչ-անցագրային և կարգավորման կետերը ծավալվում են ճանապարհի այնպիսի տեղամասերում, որոնց շրջանցումն անհնար է, կամ այնպիսի տեղերում, որ հնարավոր լինի ավելի շատ երթևեկության մասնակիցների ընդգրկումը և վերահսկումը.

14) հսկիչ-անցագրային և կարգավորման կետերի ու դրանցում ընդգրկվող անձնակազմի անդամների թիվը որոշվում է խաղաղ ժամանակ.

▪ Հասարակական կարգի պահպանության ծառայության ուժերի և միջոցների կազմը և բաշխումը իրականացվում է համաձայն ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի:

## 3.6.2 ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

▪ Քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպչական և ինժեներատեխնիկական համալիր միջոցառումներ են, որոնք ուղղված են հրդեհների կանխմանը կամ տարածման արգելմանը, մարդկանց պաշտպանությանը հրդեհներից, բարձր ջերմաստիճանից և ուժեղ ծխապատված գոտիներից:

▪ Համայնքում քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային անվտանգության ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայույյան Շիրակի մարզային փրկարարական վարչության համապատասխան տարածքային ստորաբաժանումը:

▪ Հակահրդեհային ապահովման մեջ ընդգրկվում են հրդեհային հետախուզությունը, հրդեհի մեկուսացումը և մարումը:

▪ Համայնքի տարածքում զանգվածային հրդեհների առաջացման պայմաններում տեղի հրշեջ-փրկարարական ջոկատի ուժերը չեն կարող բավարար լինել, ուստի հրդեհաշիջմանը անհրաժեշտ է ընդգրկել նաև քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, հասարակական ուժեր և բնակչությանը:

▪ Երթուղիներում հրշեջ-փրկարարական ջոկատները, բացի հրդեհաշիջման աշխատանքներից, մասնակցում են նաև.

1) փլուզված տարածքներից մարդկանց փրկման աշխատանքներին.

2) ջրամբարների պատվարների փլուզումից առաջացած ջրածածկման գոտուց մարդկանց դուրս բերմանը.

3) Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անտառների հրդեհաշիջմանը.

4) կամուրջների փլուզման ժամանակ գետանցումների իրականացման և փրկման աշխատանքներին.

5) փլուզված պաշտպանական կառույցներից մարդկանց դուրս բերմանը և առաջին բուժօգնության ցուցաբերմանը՝ օգտագործելով փոքր մեխանիզացիա և ինժեներական տեխնիկա, համագործակցելով ինժեներական և կոմունալ-տեխնիկական ծառայությունների հետ.

▪ Համայնքի հակահրդեհային միջոցառումների ապահովումը իրականացվում է Շիրակի մարզային փրկարարական վարչության տարածքային հրշեջ փրկարարական ջոկատի ուժերով եւ միջոցներով:

▪ Պատերազմական ժամանակաշրջանում հրդեհների մարումն իրականացվում է խաղաղ ժամանակաշրջանի մեկնման չվացուցակի համաձայն:

## 3.6.3. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

▪ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը, վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը, շրջակա միջավայրի օբյեկտների (մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի), ինչպես նաև սննդամթերքի և խմելու ջրի հիգիենիկ և համաճարակաբանական (այդ թվում՝ լաբորատոր) հսկողության կազմակերպմանը:

▪ Համայնքում քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության տարածքային ստորաբաժանումները:

▪ Համայնքում բժշկական ապահովումը իրականացվում է առկա (անկախ կազմակերպաիրավական ձևից) առողջապահական հիմնարկների ուժերով և միջոցներով, ինչպես նաև համայնքի բժշկական քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ուժերով:

▪ Համայնքի բժշկական ապահովումն իրականացվում է տվյալ տարածաշրջանը սպասարկող բուժ. հաստատությունների կողմից:

## 3.6.4. ՍՆՆԴԱՄԹԵՐԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

▪ Քաղաքացիական պաշտպանության սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված քաղաքացիական պաշտպանության ուժերի, միջոցառումների, ինչպես նաև տուժած բնակչությանն անհրաժեշտ նյութական, տեխնիկական միջոցներով և սննդամթերքով ժամանակին ու անխափան մատակարարմանը:

▪ Համայնքի քաղաքացիական պաշտպանության սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է մարզային քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի ու նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը:

- Համայնքի տարահանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվակը ներկայացված է հավելված N 8-ում:
- Համայնքի տարահանված բնակչության անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների ապահովման հաշվակը ներկայացված է հավելված N 8-ում:

▪ Նյութական ապահովման միջոցառումներն ուղղված են նյութական միջոցների արտադրությանը, կուտակմանը, բաշխմանը և նպատակային օգտագործմանը:

▪ Տեխնիկական ապահովման միջոցառումներն ուղղված են տեխնիկական միջոցների անխափան շահագործմանը, նրանց տեխնիկական սպասարկմանը, քաղաքացիական պաշտպանության միջոցառումներում ներգրավված տեխնիկայի բոլոր տեսակների շահագործմանն ու նորոգմանը, ինչպես նաև վերանորոգման ստորաբաժանումներին պահեստամասերով և շրջանառու միջոցներով ապահովմանը:

▪ Քաղաքացիական պաշտպանության ուժերի նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է տեխնիկայով, վառելիքաքսուքային նյութերով, ջրով, սննդամթերքով, անհատական պաշտպանության և կապի միջոցներով, շինարարական և այլ տեսակի նյութական ու տեխնիկական միջոցներով, բժշկական գույքով, հագուստով, հատուկ հանդերձանքով և այլ նյութերով, տեխնիկական միջոցներով՝ բնակչության պաշտպանության միջոցառումները կազմակերպելու, ինչպես նաև օբյեկտների և նյութական արժեքների պահպանությունը ապահովելու, փրկարարական և այլ աշխատանքներ կատարելու նպատակով:

▪ Նյութատեխնիկական ապահովման աղբյուրներ են հանդիսանում նախարարությունների, գերատեսչությունների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից)

տրամադրության տակ գտնվող նյութական արժեքները, պետական պահուստի միջոցները և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրած մարդասիրական օգնությունը:

▪ Անհրաժեշտ սննդամթերքը, հագուստը, առաջին անհրաժեշտության ապրանքները պետական պահուստից, սննդի և առևտրի խոշոր կազմակերպություններից այլ ծառայությունների հետ համատեղ կազմակերպում են նյութական միջոցների կուտակումը, տեղափոխումը, պահպանումը և բաշխումը համապատասխան մարզային շարժական կետերում:

▪ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը տրամադրում է անհրաժեշտ քանակի բեռնատար, սառնարանային ավտոտրանսպորտ և ավտոբենզատարներ քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային միջոցառումների ապահովման համար:

▪ Նյութական միջոցների պահպանությունն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանության խմբի ուժերով:

## 3.6.5. ԼՈՒՍԱՔՈՂԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

▪ Լուսաքողարկումը ժամանակակից զենքի տեսակներից քողարկման տեխնիկական ապահովումն է: Այն անցկացվում է մթություն ստեղծելու նպատակով, օրվա ցանկացած ժամին, դժվարացնելով համայնքների և կազմակերպությունների հայտնաբերումը օպտիկական սարքերի միջոցով կամ բարձրությունից՝ տեսանելի հայտնաբերման ճանապարհով:

▪ Համայնքում քաղաքացիական պաշտպանության լուսաքողարկման ապահովման համար պատասխանատու են տեղական ինքնակառավարման մարմինները:

